# ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐՈՒՄ

Հոկտեմբեր 11-ից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական փնօրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Հոգեշնորհ Տ. Մարկոս վարդապետ Հովհաննիսյանը նշանակվել է Գեղարքունյաց թեմի առաջնորդական փոխանորդ։

Մեկ այլ Հայրապետական փնօրհնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Հոգեշնորհ Տ. Արգար աբեղա Հովակիմյանը հոկտեմբեր 11-ից հոգևոր սպասավորության է կոչվել Սյունյաց թեմում՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո։

*

* *

Հոկտեմբերի 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական փնօրհնությամբ 21 քահանաներ, որպես հոգևոր հովիվներ, ծառայության են կոչվել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու զանազան թեմերում՝ թեմակալ առաջնորդների և առաջնորդական փոխանորդների իշխանության ներքո։

Տ. Սեբեոս քհն. Ղալաչյանը, Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանը և Տ. Մաշտոց քհն. Հակոբյանը հոգևոր ծառայության են նշանակվել Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում, Տ. Դերենիկ քհն. Միքայելյանը և Տ. Զգոն քհն. Աբրահամյանը՝ Արարատյան Հայրապետական թեմում, Տ. Գարեգին քհն. Արսենյանը և Տ. Ներսես քհն. Ռուշանյանը՝ Արագածոտնի, Տ. Մեսրոպ քհն. Մկրտչյանը՝ Արցախի, Տ. Սիմեոն քհն. Տեր-Մկրտչյանը և Տ. Գևորգ քհն. Տեր-Բարսեղյանը՝ Գեղարքունյաց, Տ. Վրթանես քհն. Բաղալյանը, Տ. Ստեփաննոս քհն. Մարգարյանը, Տ. Թորգոմ քհն. Մարգարյանը և Տ. Մաշտոց քհն. Ստեփանյանը՝ Գուգարաց, Տ. Շնորհք քհն. Մաթևոսյանը և Տ. Շահան քհն. Միրզոյանը՝ Կոտայքի, Տ. Ստեփաննոս քհն. Ավետիսյանը և Տ. Հովհաննես քհն. Ալեքսանդրյանը՝ Շիրակի, Տ. Խաչատուր քհն. Քեսաբյանը, Տ. Հուսիկ քհն. Նուրիջանյանը և Տ. Սեպուհ քհն. Հարությունյանը՝ Սյունյաց թեմերում։

Քահանաներից 18-ը նորաօծներն են, ովքեր 40-օրյա պահեցողության շրջանից հետո, նախորդ կիրակի, իրենց անդրանիկ Ս. Պատարագն են մատուցել տարբեր եկեղեցիներում։

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*